ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ

«01» մարտի 2024թ.
ժամը 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ.Մովսիսյան /նախագահ/,
Ա. Բոշյան, Ն.Մուրադյան,
Քարտուղար՝ Ս.Թամամավեյան

1) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-N որոշման 32-րդ կետի 21-րդ մասի պահանջները՝ ստորև ներկայացված է գնահատող հանձնաժողովի կողմից իրականացրած գնահատման արդյունքները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

2.1) «ՈՍԿԵ ԳԱԳԱԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- ներկայացված հայտում սխալ է նշվել՝ պատվիրատուի անվանումը, գնման ընթացակարգի ծածկագիրը, գնման ձևի անվանումը («Էլեկտրոնային աճուրդ» բառերի փոխարեն գրվել է «գնանշման հարցում»), չափաբաժինների քանակը,
- հավելված 1-ում /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն/ բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-N որոշման 41-րդ կետը և 2024 թվականի փետրվարի 13-ին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերի փաթեթի I-ին մասի 8.11 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝ «ՈՍԿԵ ԳԱԳԱԹ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 05/03/2024 թվականի ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի՝ դիտելով որպես գնման գործընթացի խախտում՝ ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Գնահատող **հ**անձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի մարտի 6-ին ժամը 15:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԲՈՇՅԱՆ
		Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ